

# ՀԱՌՈՒՂԱԿԱՔ


Ազնամուսիրեց եր չրաքարակեց

ՎԱՐԴԱՆ ՉԱՄԱԼԵԱՆ

(ԽԱՐԲԵՐԴԻՑԻ)

Տպարան «Շիրակ» Ալեքսանդրապոլ

1912



891.93

Բ 17

13 APR 2011

# ՀԱՌԱՋԱՆՔ

Ազգային պատմութեան

ՎԱՐԴԱՆ ՔԱՍԱԽԵԱՆ

(ԿԱՐԵԲԵՐԴԻՑ)

100/  
4589



Տպարան «Շիրակ» Ալէքսանդրապոլ

1912

29.08.2013

60377

ՏԵՇ 99A 61



### ԽԱԶԱՏՈՒԹՅ ԱԲՈՎԵԱՆԻՆ

Սրդէն վաղաւց է, որ չէ երկում  
Աստղիկդ ցոլցող, լազուք եթերում,  
Ախով աշխարհին հրաժեշտ տալով  
Խբեցիր աչերգ անուշիկ նինջով:

Օրէն սկսեալ մատաղ հասակիդ,  
Ժպիտ բնաւին չը տեսաք գէմքիդ.  
Կեանքիդ գոյութեան ամեն վայր-  
կեանում  
Վէրքը անպակաս տեսաք քո սրտում:

Այս, թէև սրտիկու միք-միք խոցե-  
րով ծածկւած փոխազբւեցար յաւիտե-  
նականութիւնը, և լոիկ ննջում ես սև  
թաւշեայ ամայի մըթին գէճ զետնի  
խորքում, զքն բնածին մօր հետ զրկա-  
խառն պարուրւած՝ բայց և այնպէս  
այն վաղեմի փայփայած իդձերդ ար-  
դէն իրականացած լինելով, ահա ծա-  
ծանում է քո յաղթանակի զրօշակը:

Հեղինակ

1912

## ԴԱՐ ՄԸ ԱՌԱՋ

Խաչատուր Աբովիանը այն հագւա-  
գիւտ սննձերից մէկն էր, որ փայլեց  
մեր գժրադդ հայրենիքի խաւար հորի-  
զոնի վրայ: Սյս մեծահոգին միտք յդա-  
ցաւ իր մէջ, որ անկեալ ազգի մը չկայ  
այլ կերպ լուսաւորութիւն և յառաջա-  
գիմութիւն... բացի հասկանալի գրչից:  
Տեսաւ, որ ալիքների բռնւած մակրցիկ  
նման տատանում է հայութիւնը մթու-  
թեան շրջապատին մէջ, և տեսաւ, որ  
Մեսրոպեան երեսուն և վեց տառերը  
բոլորովին խորդ են նրա համար, մա-  
նաւանդ աչքի առջև ունենալով ժողո-  
վրդի գառնութիւնը և նրա աղետալի  
վիճակը ծայր գազամնակէտին հասած...  
Վառառեալ սրտով նետւեց ասպարէզ,  
իր վսեմ մարի բեղմնաւոր հանձարի  
ձիրքովը, ձեռնարկեց իւր հոյակապ  
«Վէրք Հայաստանին», որը վերընծա-  
յելով, ահա մեր աշխարհաբարի զրակա-  
նութեան անդրանիկ հիմսազիր ուահվի-  
րան եղաւ: Մինչև այն թւականներում  
չկար այնպիսի տպաւորիչ հասկանալի

գիրք մը, որ հասարակութեան հոգուն  
ու սրտին պաշտելի, մօտիկից բարե-  
կամը լինէր, և նրա բղձանքների հա-  
րազատ թարգմանը հանդիսանար:

Ահա այսպիսով «Վէրք Հայաստա-  
նի» հեղինակը դարե՛ր շարունակ մեր  
գլխին վրայ ձգւած սև ծածկոցը գէն  
շպրտելով, փրկեց մեզ շրջապատող  
խաւարից, այսպէս՝ ինչպէս փարոսը իր  
շառաւիզները հեռուն սփռելով, լուսա-  
փայլ ճաճանչներովը ուղին է մատնա-  
նշում։ Նոյնը և նա, որով պիտի չի  
սխալիմ անւանելու Արովեանին երկ-  
րորդ լուսաւորիչ հայուն, որ նա մեր  
կոյր մտքի ու զգացման աչքերը բա-  
նալով, լուսաւորեց այն լոյսով՝ ինչ որ  
հայերիս համար վաղուց խիստ ցանկա-  
լի էր։ Վերջապէս այս մեծ մարդը այն-  
պէսի լուսահեղ սիւն մը տնկեց հայու-  
թեան հանդէպ, ինչպիսին էր Մովու-  
սինը, որ առաջնորդում էր իսրայէլի  
որդոց։ Փառք նորա անունին, փառք  
նրա հոգետապիչ «Վէրք Հայաստանին»,  
որը արդարեւ իրօքապէս համայնու-  
թեանցո ուսուցչապեան է համարւում։

Նիկօ «Վէրք ՀԱՅԱՍՏԱՆԻԻ» ՀԵՂԻՆԱԿԻ  
Խ. ԱԲՈՎԵԱՆԻ ԱՆՄԱՀ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ուր ես ով պօէտ, քեզ ենք փնարում,  
Արդեօք մի տեղ կան հայրենեաց

զրկում։

Աւաղ, անյայտ է տեղդ հանգստեան,  
Սուրբ գերեզմանիդ կարօտն ենք  
քաշում։

Ո՞վ քեզ ամփոփեց, զրաւ մէջ հողին,  
Ո՞վ կար քո մօտը այն ճգնաժամին։

Մի գուցէ դահիճք կեանքէդ զրկեցին,  
Միթէ այդպէս էր գիրը քո ճակախն։

Ա՞ն, ո՞ր անգութը անձիդ բռնացաւ,  
Վաս կեանքիդ արե քեզանից խլաւ։

Զի գտւաւ մէն մի, որ ի քեզ փրկեր,  
Կայ մինը երկնում, այն ալ է լանր…

Հայի զինդակ օրեաց սպալիր,  
Պատգամ իրապէս անկեղծ պատմապիր,  
Հարանց և եղբարց դարդերք պատմելով,  
Մեր ծով վշտերաց վշտերք բարդեցիր։

Տոչորւած ազգիդ սիրուն հալւելով,  
Նրա հրովը համ միշա վառւելով,  
Ամեն մի բառը սրախիդ խորքերէն  
Նկարագրիր հոգիդ դաղւելէն:  
Թէև լուած ես դարդեր պատմելու,  
Արդէն վիրաւոր մեր սիրուք խորւելու.  
Գրչովը կերտած կոթող թանկագին  
Քո տեղ պատմում է «Վէրք Հայաս-  
տանին»:  
Քո սիրագնութեան պատմական զրեաց  
Հանդէս խորապէս մեր զլուխք թեքած,  
Որով գու եղար խաւարը ցըրող,  
Աղամայ մըթէն հային ազատող:  
Այդ անկած ծառիդ ճոխացան ճիւղեր,  
Տէրւով զարդարւան բողբոջ ոստիկներ,  
Որուն արմատքներ աստ անդ տա-  
րածւած  
Կոկոններ տալով բացեր վարդիկներ:  
Եւ արդ պիտ կանգնենք վեհիդ մահ-  
արձան,  
Գոնէ անունիդ հիմնենք օթեան.  
Գէթ մի այսպիսով մեր սէրն յայտնած,  
Լինենք սրանով մեր պարտք կատարած:

Հ Ա Յ Ա Զ Գ

Թէի օտարք քեզ սիրում են,  
Բայց գու երբէք մի՞ հաւտար,  
Որով այդ շոյանքն է,  
Կեղծ ու պատիր կործարար:  
Նոքա միշա էլ սերտ սրտաբար  
Շուայլում են ժպաններ,  
Եւ ճակտիցդ հա քաղելու  
Կեղծիրով լի համբոյրներ:  
Որ մինչի իրց նենդ մտային,  
Զիք խորհուրդն իրակնած,  
Ճիգ են թափում հուսկ տեսնելու  
Սև իղձելքն կատարւած:  
Բայց գու հայ ազգ արթուն կացիր,  
Զէ մրափի ժամանակ...  
Նաւիդ զեկը գու հմտաբար,  
Բնիր ձեռքումդ տմուրակ:  
Զգոյշ եղիր կուլ շզնաս  
Փրփրագոռ ալեաց մէջ,  
Ճանկարծ չըտաս քո դարենոր  
Վեհ զոյտթեանդ իսպան վերջ:

Սէր միութեան զէնքը ձեռիդ,  
Ամուր բռնիր սրտովին,  
Թէ դու կուզես որ չի մնայ,  
Լոկ քո անուն աշխարհին:

ԿԵՂԾ ՀԱՄԲՈՅՐՆԵՐ

1908 թ. օգոստոսի 22-ին Օսմ.  
Սահմանադրութեան առթիւ.

Այդպէս յուսացէք՝ թէ դայլը դառին,  
Կլինի ընկեր, կողք կողքի կապրին,  
Փինջ փնջի տւած կ'արծին միատեղ,  
Սա քանբաղդ ու քանդ ցաւ աշխարհը  
նեղ:

Այդպէս յուսացէք՝ առիւծն ու վազրը,  
Պիտ պարզեն զիրարց ջլոտ բազուկներ,  
Իրեն հարազատ եղբարք հայրենեաց,  
Մէջը ապրելու բնութեան բարեաց:

Այդպէս յուսացէք՝ թէ փիղն ու ցուլն,  
Այլ սերտ կապերով պիտ դաշն կնքեն,  
Անուանի մըջի այս հոեառորներ,  
Սիրաբուղխոգով պիտ տան համբոյրներ:

Այդպէս յուսացէք՝ կոկորդիլոսը  
Թափում է անկեղծ շըր շըր արցունքներ,  
Եւ վիզը ձկած նայում հէք գէմքով,  
Գառնուկի նման անմեղիկ սրտով:

Այդպէս յուսացէք՝ որ մուկն ու  
կատուն,

Ոխքն իրց սրտից և այլ կը հանուն.  
Անցեալք մոռնալով կմւտան թաթիկներ,  
Հաշտ աչով նային, կրլան եղբայրներ:

Այդպէս յուսացէք՝ օճն ու գորտը,  
Թէ որ հանդիպին առւաց եղերքներ,  
Անխարդ բարեկամ մօտկեմօտ գալով,  
Պիտի լզվրդեն մին մինի պոկներ:

Այդպէս յուսացէք՝ կրակն ու ջուրը,  
Այլ մինը միւսին պիտ չլայ ներհակ.  
Պաշիկներ տալով անկեղծ սիրաբար,  
Զիրարք զրկելով կապրին հաշտաբար:

Այդպէս յուսացէք՝ այլ այսուհետե  
կրլան հաւասար ագռաւն ու սոխակ,  
Նա էլ նըան պիտ պատւաւոր էակ,  
Պիտ տայ վարդերին գեղգեղուն դայլակ:

Այդպէս յուսացէք, որ սկ սատանան,  
Գոհ է Աստուծմէ, չի ատեր նրան.

Մաքրագեղ սրտով պրպլչում մեղան,  
Հաշտ աչով նայում զէպ աղօթարան:

Այդպէս յուսացէք՝ ուժեղը տկարին,  
Կընէ նրան տէր իր իրաւունքին,  
Այդպէս յուսացէք՝ գոռող մեծատուն,  
Կըլլայ բարեկամ խղճուկ աղքատին:

### ԱԶԳԻ ՊԱՀԱՆՁԻ

Ահա դարեոր գահը պատմական,  
Բազմար վեհապանձ ֆէորդ Սուրէնսկան,  
Հոսկի լնարեալ, հովիւ պատւաղին,  
Առ քեզ ողջունում ազգդ սրտագին:

Քո վեհազնութեան ահա վիճակւած,  
Հարցեր կան պէս պէս, քո առջի  
գրւած,

Որը նախորդիք... թողին թերի թեմ,  
Տեսնէ ազգդ այդ քեզնով աւարտւած:

### ՎԱՐԴԻՆ ՍՈՒԱԿԻԾ

Ծաղկանց թագուհի վառ կարմիր  
վարդիկ:

Իջեր էր սոսիդ, սոխակը թոչնիկ,  
Քո վիթիթ նրբին մէջ թերթիկներուն  
Դրած գլխիկը ոէրդ էր գայլացլում:

Սասաիկ սիրհարւած գեղանի գէմքիդ,  
Հա, պէտքներով շուրջդ էր սո-  
տոսառում,

Քաղցը մեղեգեաց ելիէջներով,  
Առ ի քեզ սրտէ ներբողներ ձօնում:

Թրթում էր սիրտը, տրոփում հոգին,  
Քողում էր վարդ, չըլլայ որ խամրիս,  
Դու էիր միայն նրա բերկրանք,  
Առանց քեզի նա չունէր երբէք կեանք:

Տարափում առ միշտ անհուն գով-  
գանքներ,

Սփռում էր շուրջդ, ծաւալում եթեր,  
Վես ոգով արդէն սիրուդ տարւելով,  
Այտէդ համբոյներ քաղում գօր գիշեր:

Փշալիր թվկիդ վրիցն մեղմիկ,  
Պիշ նայում էիր քո սիրահարին.  
Վարսաւուած տէլուով ինչպէս նոր  
հարսիկ,  
Գողարիկ ակնարկովդ հանելով հոգին:  
Սա զերդ անմեղիկ խղճուկ էակին,  
Գրաւչանքներովդ ըրիր քո զերին.  
Ո՞վ վարդիկ սիրուն, բոսոր պսպղուն,  
Քո այդ հմայիչ չքնաղ պատկերին:

Երբ (նա) մեղկըկուկ սեղմեր էր կրծքում,  
Դէմքդ շոյելով քեզ էր պաշպըչում.  
Յանկարծ ֆըշըրաց անգութ... հոգմիկը,  
Գերեց սարսափը քնքոյշ սրախկը:  
  
Շար շար նրբագեղ շողքուն թերթիկ-  
ներդ,  
Հատ հատ հովիկը, պոկեց կոճղակէդ,  
Թոշմած թոռոմած, աստ անդ ցրցրւած,  
Տեսաւ սոխակը, համակ ինելաքւեց:  
  
Քո վեհ իզմիրլեան թուչնեակդ թափաաց,  
Որ է պաշտելի էակ վարդէնեացդ,

Արձակեց ընդդէմ հուժկու դայլանքներ,  
Բայց աւազ զքեզ իրնից խլած էր....:

Լեցւեց վշաերով սրախկը նրբկիկ,  
Արցունք աչերից շիթ շիթ թափելով,  
Տըւեց հրաժեշտ չոր ոստիդ վերջին,  
Դէպ լազուրդ եթեր սուրաց լալագին:

## ԶՄԵՐԸ

Եկաւ ձմեռը թափւեց տերևներ,  
Պճապարդ ծառանց մերկացան ձիւղեր.  
Պատեր է մշուշ, եթերն է մոայլ  
Տիրեր ամայեանք համայն տիւղեր:

Սաստկաշանթ կայծակ վերիցն է խփում,  
Գոռ որոտներով մարտչում անդագար.  
Զիւն, կարկուտ, անձրհ զիրարք են  
խարւեր,  
Խիղճը բնութեան կարծես սպառւեր:

Ծովերք կատաղած սոսկ գոռունքներով,  
Ալիքներ դէզ-դէզ դէս դէն են նետում,

Դէպ ագն են վազում վրախուրք բեր-  
ներին,  
Բաշխում են հուժկու սեպտող ժայռերին:  
Թռչունք շւարած հողմից, մրրկից,  
Կծկւած նսդերք չոր ոստիկներում,  
Մելամաղձ կերպով նայում են վրար,  
Սև իրց վիճակի օրերն են ողբում:  
  
Համակ թռչելով ճախրում են օղում,  
Իսկոյն հապճեպով ետ ետ նահանջում,  
Անյոյս դրութեամբ իջնում ծառներին,  
Ծավանքներով կանուցներ թափում:  
  
Գաշտերք ամայի, ձորերք ոռոգում,  
Գետերք որնթաց դէպ ծովք են վազում,  
Սուգ է աշխարհը, սուգ է էութիւն...,  
Աննախանձ վիճակ վիշտ ու արտմու-  
թիւն:

Ահա ձմեռը բերեց զաղձ օրեր,  
Լեռք, բլուրք, դաշտերք հազած ձեր-  
մակներ,  
Իջեր ասպարէզ, սուլում է քամին,  
Տարերք խառնւած անցեր մին միւսին:

ՆՈՐԻՆ ՄՐԲԱՋՆ. ԱԶԳԱՆԻԿԻՐ ԻԶՄԻՐ-  
ԼԵԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՍԲ. ՅԻՇԱՏԱԿԻՆ  
Վիշտ մ'ալ աւելցաւ ծով վշտեաց հայ  
տպգ,  
Գարեր համբընթաց վշտերով պատւած,  
Կոյր բախտը դէթ մի դէպ քեզ չի  
ժպտաց,  
Միշտ ճակտիկ կնիք սիով դրօշմած:  
Ահա քո ողովթ մոայլած դէմքիդ,  
Դրած ետ ձեռքդ կնճռստ ճակտիդ,  
Խոցերով լեցւած էջերը սրտիդ,  
Ողբում ես մահը «Երկաթէ» վեճիդ:  
Դու որոնում ես պաշտելի պետիդ,  
Որ գներ դարման շարաւոտ վերբիդ.  
Բայց աւաղ, որ (նա) այլ չկայ, չկայ,  
Ինչպէս իր անձը քո ցաւը զգայ:  
Արդէն զիառում ես նորա բազմազան,  
Իրրե կուռ ամրոց քո անձին պաշտպան,  
Բողոքով ընդդէմ զանիբաւութեան,  
Անձը դրած էր քո կեանքի ապրման:  
Արդ եկած ծունը հանդէպ շիրիմին,  
Մորմոքւած սրտով քո մեծ կրօսաման,



Տաղով մեղեգով, յուղւած հեկագին,  
Կուտաս համբոյրներ սուրբ գերեզ-  
մանին:

Դրւեց հանդստեան ի մէջ տաճարին,  
Հոգին աւանդեց, վերաց գէպ երիլին,  
Բո պետ պատմական (Երկաթ) Իզ-  
միրլեան  
Խլւեց քեզանից ընդմիշտ յաւիտեան:

ՕՍՄ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Դարձեալ մթքնեց երկինքը հայուն,  
Դարձեալ աւերմունք գօս հայրենիքում,  
Գոռ որոտ, կայծակ, շանթ ու շա-  
ռաչում,  
Կրկին արեան ծով, հեկ ու հառաչում:  
Ահա լուռում է հեծ ու հեծկանք,  
Բիւրաւոր բերանց աղի հառաչանք,  
Թանձր ահարկու խաւարն է տիրեր,  
Մռայլն է պատել, մորմոքող որտեր:  
Այրեացեալ կանայք, հարս, աղջիկ,  
Լուսանք,  
Բռնաբարումի եղած են բաժին...

Պէս-պէս նսողձիրներ գործող վայրենի,  
Դարեոր (սս) չիք դաւաճան ցեղին:

Միշտ զարհուրելի կարմիր տեսարան,  
Ընկած է վիճակ խղճուկ հայութեան,  
Կրում ահսելի երկարեակ գարեր,  
Անվերջ անդադար Բեթղեհէմեան  
ջարդեր:

Երեխայր մայրեաց, հանում փորերաց,  
Թրատում, մորթկում, հեգուկ էակաց,  
Որը իսկապէս եղած սպանդանք,  
Տեսնող մարդկութեան բերում ցնորանք:

Արեան դաշտի մէջ ցնցող հոգիներ,  
Տեսէք, անշնչեալ համազգեաց կոյտեր,  
Շպրտած դէս դէն ջլատւած դիեր,  
Որպէս աշնային թափւած տերեներ:

Մորթգերք դէմքերի, քերծւած, քեր-  
թուած,  
Փշրւած գանգերք, ուղեղիներ թափւած,  
Մին մինի կողքին բարդի բարդ ընկւեր,  
Դաշտ, հովիս, բլուրք, ձորերք  
լեցվուեր:

Մանուկիներ մատաղ ընկած են մայրաց,  
Հոռող արհալիր վրայ կրծքերաց,  
Օդըն է ցնդում նրանց կականչանք,  
Գերեր է լրանք, չունին տէր տիրանք:  
Ահա մշուշեր երկինքը հային,  
Մըրկեր շուրջը թորգումայ տունին,  
Վազւած կրծքիցը արեան գետակներ,  
Արդէն աեսնում է համայն տիեզեր:  
Ո՞ւր է վերեկ էակն հաւատւած,  
Կասեն, աեսնում է այս բոլորն Աստւած,  
Սա սրտաճմիկ, սոսկ տեսարանը,  
Որ միշտ սարքում է լկոի խուժանը,  
(օսմանը):

1908 թ. Սեպտ. 26 եալթա

### ՍԵՒ ԾՈՎՔԻ

Ո՞վ գու սև ծովակ, ինչու ես յուզւում,  
Գոռ կոհակներդ տարու և բերում,  
Այդ լայնածաւալ զեղ ափունքներդ,  
Անհուն գարերով ծեծում ես, ծեծում:  
Շոխնթներդ հավճեալ մին մինի խփում,  
Պէս չածի նման վեր-վեր ես ուռչքում,

Այդ կուստակ կուստակ խիտ ալիքնոներդ  
Գոռ գոչունքներով գէպ դուրս նե-  
տրառում:  
Գիթխարի ուռչքով փրփուներ բաշիդ,  
Բոնած հեղանքով, արշաւում չորսդիդ,  
Գործելով հա միշտ անզուսպ արձակում  
Խնկում փըշըւում, ցիրւեցիր լինում:  
Որսառում, ուռչում, շուրջըդ աղմկում,  
Խնչու բերնիցիդ, պիտկուցներ թափում.  
Խօլ խայտանքներով, ծալք-ծալք վետ-  
վետում;  
Սոսկ շոցներով գէպ ափն ես խուժում:  
Ալիքներդ բեկ բեկ, ալիքներդ պղտոր,  
Զարնում ես զիրար անվերջ անզադար,  
Քերթելովեզերքդ փախչում ես ետետ,  
Կրկին հեր հե վազում ես ափերդ:  
Միշտ վրդոտ հայեացք նետում  
շուրջդ,  
Խօպ խօպ ծոպծալով, պատում  
ալիքներդ,  
Շառաջներդ սարսուռ լսում են ահեղ,  
Ահոելի ձայներ գորշ տարտարոյէդ:

Ալեաց խարնիձանհձ տարափներ տեղում,  
Երկինք և երկիր զիրար ես խառնում,  
Դար ու փոս ընկած չունիս դադարում:  
Միշտ վշտիդ խորքէն վշտերդ հառաջում:  
Ո՞վ գու սև ծովակ, ո՞վք ես որոնում,  
Որ ֆշրան ալիքներդ դէս դէն վազ-  
ցնում,  
Սյլ չկան, չկան «Տիրիթ և Տիրան»,  
Որ քո վրայէն դէպ Բիւղանդ գնան:

### ԽՈՐ ՔՆԻՍ ՄԷՋ

Լուռ խոր քնի մէջ շուրջս էր ամայի,  
Իբրև անզգայ զիտակ մը ընկած,  
Փուած մահիձում իս չէի զիտեր,  
Այստեղ թէ այստեղ... ուր էի նիրհած:  
Երբ աստւածութեան պարգևն տւած,  
Նուրբ հոգիս տւաւ չնշուկներ սրտիս,  
Իսկոյն զարթնեցայ խուփ աչերս բացած  
Դիտեցի շուրջս, ուր եմ ես պառկած:  
Բացւելով աչերս տեսայ խառնարան,  
Խուժաններ անցնում սրաբշաւ լղճւած,  
Եւ ամեն մինը պօռչում էր իմնէ...,  
Տեսայ ամենից ես եմ մոռացւած:

Հուսկ ես ալ համակ նրանց խառնւած,  
Շուտ համակւեցայ, ամենքից ատւած,  
Ալ այս անիծւած ունայն աշխարհին,  
Յափշտակւեցայ կախարդիշ դէմքին:  
Որը պահըմ առաջ, զիս էի կորցրած,  
Գոյնո էր նետւած, դէմքո էր այլ-  
այլւած,  
Կարծես մեռել մը դէն շրպտւած,  
Փուչ տիեզերքէն ձեռքս էի քաշած:  
Եւ ահա արգէն արիւն եմ թքնում,  
Կեանքիո օրերու ամեն վայրկեանում,  
Վիշտը անզպակաս, սիրտս է կրծըտում,  
Առ միշտ յարաժամ հոգիս մորմորում:

### ՆԵՐԿԱՅ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Ես գրօշմեցի ձեր ճակտին սեր,  
Սոյն թւականիս, թէ ինչ էր հայը,  
Խառնակ Բաբելոն՝ ձեր տեսարանը,  
Թող յաջորդ սերունդ լինի քննողը:  
Որ ամեն մինդ ճրքանքներ թափում,  
Լինել զիրքի տէր, մեծարւել, պաշտւել,  
Խիղճ ու խճմասնք մեռած ձեր սրտում,  
Ձեր սին փառքերին ամեն ինչ զոհում:

Սէրը վազուց է, տեսնել չէք ուղում,  
Սիրահար զիբարց, վրայ յոխորդում.  
Մինդ համ միւսին էք, միշտ կրըծառում,  
Ոչ մի ճիւղի... մէջ չունէք ար-  
դաբում:

Եղբայր իր եղբօր վերջին ծայր առում,  
Մինչ իսկ չէ եղած Սոզոմ Գոմորում,  
Վերջը չունեցաւ, ախ այդ անաքանդ  
Զեր զիրարց արարք, ձեր արիւն  
ծրագանք:

Դաւ ու մատնութիւն իջեր ասպարէզ, Եռանդուն ոգով մորթում սիրակէզ, Լոկ այդ չքամիթ անձնական շահին, Ի սէր ձեր միայն կեղտոս կոկորդէն:

Որը մի չնչին բանի... բռնկում,  
Ոյժի գիմումներ մի ակնթարթում,  
Կիրք ու սիս արդէն զիրարք են խարսէր,  
Ամեն սրբութիւն սաքի տակ տրսէր:

Սա «վրէժ» իկոս յետնորդ սեբունդին  
կիթուննեմ կոթող, թող «նոքա» զատին,  
Զեր եղեռանքներ, զագիր զգւագին,  
Զեր փայրը տալով, ձեր երեսը թքնին:

Q P H Q U K T B P

<b>Երես</b>	<b>Տող</b>	<b>Եղել է</b>	<b>Պէտք է լինի</b>
7.	16-րդ	զինդակ	զժնդակ
9.	3-րդ	Որով	Որովհետեւ
14.	13-րդ	Գերեց	Տիրեց
16.	3-րդ	Բաշխում	Բաղխում
16.	6-րդ	Կերպով	գէճքով
17.	7-րդ	ոզոթ	սզոթ
18.	17-րդ	սրահը	սրահը
20.	4-րդ	Գերեք է	Տիրեք է
21.	8-րդ	ուռչում	ոռնում
21.	15-րդ	Քերթելով	Քերզելով
21.	17-րդ	նետում	նետում հա
22.	4-րդ	վշարիդ	սրաիդ
24.	11-րդ	մորթում	զորթում



ՀՀ Ազգային գրադարան



NL0363846

ՀԱՅՈՒԹՅՈՒՆԻ ԱՐԴՅՈՒՆ

60371

Գի՞նն է 15 կմ.

Յանկացողները կարող են դիմել՝ յատ  
Վարտան Կամալյան